ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ
MISSION ARMENIA NGO

«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՀ-12
08.01.2026թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
Կարեն Սարգսյանին

Հարգելի պարոն Սարգսյան,

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), «ԷյԷսԲի» Հայաստան (ASB) կազմակերպության հետ համագործակցությամբ և տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (BMZ) ֆինանսավորմամբ, իրականացնում է «Փախստականների և ընդունող համայնքների հզորացում. աշխատաշուկայում մրցունակության բարձրացում և ակտիվ աջակցություն կայուն ինտեգրման համար (ELSI, 2025-2029) բազմամյա ծրագիրը:
Ծրագրի նպատակն է զարգացնել մասնագիտական հմտությունները, ընդլայնել տնտեսական ինտեգրման հնարավորությունները և բարելավել փախստական և ընդունող համայնքների խոցելի կանանց զբաղվածության հնարավորությունները՝ ներառական և բարձր որակի մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ / VET) միջոցով:
Ծրագրի շրջանակում Կազմակեպությունն իրականացնում է մրցույթ-հրավեր՝ հավատարմագրված ՄԿՈՒ (VET) հաստատությունների համար՝ Հայաստանի մարզերում (բացառությամբ Երևանի) մասնագիտական ուսուցման դասընթացների իրականացման հնարավորությամբ:
Սույնով խնդրում եմ Ձեր աջակցությունը՝ Ձեր գերատեսչության համապատասխան ստորաբաժանմանը տրամադրել տեղեկատվություն սույն մրցույթ-հրավերի վերաբերյալ, որպեսզի վերջինս իր ենթակայությամբ գործող, հավատարմագրված մասնագիտական ուսուցում իրականացնող կառույցներին իրազեկի մրցույթին մասնակցելու հնարավորության վերաբերյալ:

Մրցույթի հրավերը հասանելի է հետևյալ հարթակներում՝

- ✓ «Առավոտ» թերթ
- ✓ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ կայք- https://missionarmenia.org/ և ֆեյսբուքյան էջ https://www.facebook.com/MissionArmenia
- ✓ I-Tender հարթակ՝ https://www.itender.am/
- ✓ Tender.am հարթակ՝ https://www.tender.am/

Հարգանքով՝
Երվանդ Մելիքյան
«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ նախագահ

Կատարող՝
Հերմինե Փայտյան 096002770

Հայաստան, Երեւան 0026, Նժդեհ 42 Հեռ. (010) 444-792 Էլ.փոստ. ngo@missionarmenia.org Կայք. www.missionarmenia.org
42 Nzhdeh, Yerevan 0026, Armenia Tel: (010) 444-792 E-mail: ngo@missionarmenia.org URL: www.missionarmenia.org